ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕԾՄԱՆ ՏԱՍՆԱՄԵԱՅ ՏԱՐԵԴԱՐՁ

Սեպտեմբերի 28-ին, Վարագայ խաչի տօնի օրը լրացաւ Ազգիս սրբազնագոյն Հայրապետի օծման տասը տարին։ Այդ օրը մեծահանդէս կերպով տօնուեցաւ Հայոց բոլոր եկեղեցիներում։ Այստեղ, վանքի Մայր եկեղեցում, այդ օրը հանդիսաւոր պատարագ կար՝ բոլոր հայ հոգևորականութեան և խուռն բազմութեան ներկայութեամբ և կատարուեցաւ հայրապետական մաղթանք։

ՀԱՀԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ ՀԱՅԵՐԻՆ

«Այն օրից, որ Իրանի կայսրութիւնը մեր Օգոստափառ անձնաւորութեան վիճակուեց, իբրև երախտագիտութիւն առ Աստուածային Նախախնամութիւնը, մենք տարածեցինք մեզ շնորհուած ողորմութեան ճառագայթները մեր Կայսրութեան բոլոր բնակիչների վրայ, ինչ ազգի և ցեղի ու կրօնի պատկանէին նրանք, և ամենքին միևնոյն հայրենիքի որդիներ համարելով՝ ամեն առիթով և ամեն պարագայում նրանց բարօրութեան համար ոչինչ չը խնայեցինք։ Ցոյս ունինք, որ ամենակարող Աստուծու օգնութեամբ աւելի քան ցարդ վայելելով երկնային օժանդակութեան շնորհը՝ մեր այս սուրբ պարտականութեան մէջ աւելի յաջողութիւն գտնենք։

«Եւ արդ, մի բան, որ մեր սրտի բարի իղձերի հետ կատարելապէս համապատասխան է, այն է, որ մեր Կայսրութեան Հայ ազգաբնակութիւնը, որ հին ժամանակներից ի վեր ապաստանած է առ ոտս Պարսից Արքայական Դահի, և որը մշտական հաւատարիմ հպատակութեան և երկրասիրութեան ապացոյցներ է տուել, այժմ մտադիր է իր դպրոցների թիւն աւելացնել Թէհրանում, Դաւրէժում և Պարսկաստանի այլ գաւառներում, հաստատելով մի քանի կեդրոնական նշանաւոր դպրոցներ, և այս առիթով մեր Օգոստափառ Վեհափառու-

թիւնից արտօնութիւն է խնդրել այդ դպրոցների բացման համար։

«Հայերի այդ նպատակը մեր սրտաբուխ փափագների հետ համաձայն դտնելով, և նկատելով, որ այդ նպատակը մեր հպատակների առաջադիմութեան պատճառ պիտի դառնայ կրթութեան, արհեստների և երկրագործութեան ասպարէզներում, և վաճառականութեան զարգացման մղիչ պիտի հանդիսանայ, սոյն հզօր Արքայական Ֆերմանով չնորհում ենք նրանց արտօնութիւն՝ Պարսկաստանի Հայ դպրոցների բացման համար, և այդ դպրոցները մեր մասնաւոր հոգածութեան և պաշտպանութեան տակ առնելով՝ հրամայում ենք, որ այն գումարները, որոնք այդ ձեռնարկութեան համար յատկացուելու են, գործադրուեն, նոյն գործի ձեռնարկողների և հոգաբարձուների յօրինելիք կանոնադրութեան համեմատ որոշուած ծախսերի համար։ Ընդհանրապէս բոլոր հաստատուած դպրոցները մեր արքայական Անձնաւորութեան պաշտպանութեան տակ դնելով, հրամայում ենք, որ մեր բոլոր պաշտօնեաները ամեն տեսակ աջակցութիւն և օգնութիւն նուիրեն նոյն նուիրական գործի յաջողութեան համար։ Տրուած ի Ռէշտ ամսին 1318 թուին»։

(Նոր-Դար)։

ԽՈՒԴԱԴԵԱՆ ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆ—ՈՐԲԱՆՈՑ

1897 թուին Թիֆլիսում վախճանուեցաւ վաճառական Յովհաննէս Դաւթեան Խուդադեանցը, որ իւր ամբողջ կարողութիւնը, գրեթէ հարիւր ութսուն հազար ռուբլու արժողութեան, կտակեց Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան, որպէս զի այդ գումարով պահուեն զանազան բարենպատակ հաստատութիւններ։ Հանգուցեալը թաղուեցաւ Մողնու եկեղեցու գաւթում։ Նորա կտակը մինչև այս տարի մնացել էր անիրագործելի։ Այժմ, վերջապէս Թիֆլիսի Հայ Բարեգործական Ընկերութեան նախաձեռնութեամբ և պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ այդ կտակի հաշուով նոյն իսկ Խուդադեանի կտակած տան վերնայարկում այս օրերս բացուեց «Խուդադեան որբանոցը կամ ապաստանարանը», ուր պիտի խնամուին մշտապէս 20 բոլորովին որբ հայ աղջիկներ մինչև չափահաս դառնալը։ Բացման հանդէսը կատարուեց մի համեստ հանդիսով, նախապէս հոգեհանգիստ կատարուելուց յետոյ հանգուցեալ բարերարի շիրմի վերայ։ Որբանոցի ներքին կազմակերպութիւնը գտանք խիստ բարեկարգ և օրինակելի։